ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Նարեկ Կարապետյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2025 թվականի հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 8-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական ախտորոշում» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել է, թե ինչպես ախտորոշել մակրոտնտեսական անհավասարակշռությունները և բացահայտել խոցելի հատվածները տնտեսության: Դասընթացը ներառում էր չորս հիմնական՝ իրական, հարկաբյուջետային, արտաքին և ֆինանսական հատվածների հիմնական ասպեկտները: Հիմնական շեշտը դրվել է այս հատվածների ախտորորշման և խոցելության բացահայտմանը: Դասընթացի էական բաղադրիչը եղել են գործնական սեմինարները, որոնք կազմել են դասընթացի ամբողջ ծրագրի հիմնական մասը:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ուներ համապարփակ բնույթ և ընդգրկում էր մակրոնտեսական վերլուծությունների և դրանց հիման ախտորորշման ընդհանրական նկարագրեր՝ արժևորելով վերջիններիս կիրառական նշանակությունը:

5. Քննարկված թեմաները՝

1. Մակրոտնտեսական շրջանակ,
2. Տնտեսական աճ և արտադրողականություն,
3. Ամբողջական պահանջակի գործոնային վերլուծություն,
4. Գնաճի և դրամավարկային քաղաքականության վերլուծություն,
5. Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն,
6. Պարտքի կայունության գնահատում,
7. Արտաքին հատվածի վերլուծություն, մրցունակություն
8. Խոցելիություն և ռիսկերի գնահատում:
9. Տնտեսական և ֆինանսական կայունություն,

10. ՀՆԱ ներուժ և ներուժային մակարդակից շեղման գնահատում,
11. Աճի ախտորոշում արտադրական ֆունկցիայի միջոցով,
12. Աճի վերլուծություն ըստ ծախսային բաղադրիչների,
13. Հարկաբյուջետային հաշվեկշիռ, ցիկլով ճշգրտված հարկաբյուջետային հաշվեկշիռ,
14. Մակրո-ֆիսկալ փոխկապվածություններ,
15. Դրամավարկային քաղաքականություն, ինֆլյացիա, Թեյլորի կանոն,
16. Արտաքին պարտք, պահուստներ,
17. Մրցունակություն, արտաքին ռիսկեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, ուսումնական խմբային խաղեր, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Միաժամանակ շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները: :

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

13 օգոստոս, 2025թ.